

Աստղիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Երևանի պետական համալսարան

ԳՈՐԾԱՐԱՐ ԽՈՍՔԻ ՊԱՅՄԱՆԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ԴԵՅՎԻԴ ԼՈԶԻ “ԼԱՎ ԳՈՐԾ” ՎԵՊՈՒՄ

“The frustration arises from the fact that despite much progress , we remain as incapable as ever before of coming to grips with the core problem of human language. ... The normal use of language is a creative activity.”

Noam Chomsky, Language and Mind, 2006

Գործարար հաղորդակցության լեզվում առկա դարձվածարանական կաղապարների ձևավորումը գրական ժանրում հետաքրքրական է այն առումով, որ գործարարության ենթալեզուն՝ սոցիալապես կենսունակ իրավիճակների խորային պատկերումների միջով անվերջանալի շտկումների է ենթարկվում, ինքն իր ներսում գոյացնելով նորարար հասկացություններ: Բիզնեսի աշխարհի մարդկանց խոսքուզբայրը ինքնարերարար հանգեցնում է քաջածանոք հասկացությունների նորագույն և ժամանակին հարիր ըմբռնումների և մեկնաբանության: Հասկացությունների շտկման գործընթացը այնչափ դինամիկ է, որ տերմինի մեկնաբանները և բառարանագիրները ճգնում են հնարավորինն ճկուն և մատչելի լինել ոլորտում կարևորվող բառի կամ բառակապակցության տարրերակումների որոնումներում:

Տերմինաստեղծման ոլորտում կատարված ուսումնասիրությունները բազմաբնույթ են և հակասական: Ակադ. Էդ. Աղայանը տերմինաբանությունը բնութագրում է որպես «տվյալ լեզվի բառապաշարի **գործառական մասնաշերտ**, ... այդ դեպքում ելակետը բառերի գործառական բնութագիրն է», «այս ելակետը բառարար հիմունք է բառապաշարի գործառական դասակարգության համար, բայց ըստ էության շատ քիչ բան է ասում տերմինի մասին և չի կարող հիմք հանդիսանալ տերմինի բնորոշման համար» (Աղայան, 1978): Պրոֆեսոր Ա.Ա. Ռեֆորմատսկին, անդրադառնալով *տերմին* բառի սահմանմանը /*terminus* – սահման, եզր/ փորձում է ձևակերպել տերմինը սահմանափակող և կամ նրան առօրեական բառապա-

շարից տարանջատող գործուները՝ այդպիսով դասակարգելով զանազան ոլորտների տերմինահամակարգերը: Ըստ Ռեֆորմատուկու, տերմինի, հասկացության և բարի հարաբերակցության խնդրի շուրջ գոյություն ունեն երկու սկզբունքորեն տարբեր միտումներ, որոնցից մեկը նա անվանում է «անվանական միտում» (հոմինատիվա տեղենուա տերմին, շահագույն սեղմական միտում) և առաջի առաջարկությանը հասկացությանը, որն էլ նա համարում է առավել արդյունավետ /Ռեֆօրմատսկի, 1959/: Թե՛ Աղայանը և թե՛ Ռեֆօրմատուկին իրենց տեսություններում և դատողություններում հենվում են գործառության մեջ հաստատապես շրջանառվող որոշակի կոնկրետ գիտատեխնիկական տերմինապաշարի վերլուծության և դասակարգումների վրա: Ուշագրավ է ֆրանսիացի Լեզվաբան Էմիլ Բենվենիստի դատողությունը իր *Լեզվաբանությունը փոխակերպումների ճանապարհին* բեկումնային աշխատության մեջ: Վկայաբերելով Սոսյուրի նշանային համակարգերի տեսությունը՝ Բենվենիստը նշում է, որ «Երկու միմյանցից տարբերվող համակարգերի ներսում նշանական նշանառությունը ամենակին չի նշանակում այդ համակարգերի միավորների համադրում և կամ համեմատություն»:

«Տարբեր համակարգերի ներսում կարող են գործել միևնույն նշանները, և սա ամենակին չի հանդեցնում ոչ նրանց հոմանշությանը և ոչ էլ միմյանց հանդեպ առավելության, այլ կերպ ասած՝ նշանը կրում է էապես անփոփոխ նույնականություն, և միմյանց գործառական առումով այն տարբերվում է» /Բենվենիստ, 1974/: Այս դրույթը թերևս կարող է դիտարկվել որպես ամենադիպուկ ելակետային սկզբունք որոշակի կոնկրետ ոլորտի համար կիրառելի բառապաշարը սահմանելիս, քանզի ոլորտը դիտարկվելով որպես ուրույն նշանային համակարգ իր ներսում գործառության է ենթարկում բազմաբնույթ և այլ համակարգերում կայացած նշաններ միմյանց տվյալ ոլորտին հատուկ գործառական նշանակություններով:

Գործարարության տերմինների սահմանորոշման ճանապարհը մեզ ուղղողում է դեպի քաղաքակիրք բիզնեսի գրագրության օրրանը՝ Անգլիա, մի աշխարհ ուր առևտրային գործընթացների շարքացումներին զուգահեռ ծնունդ են առել առևտրային կյանքի գրավոր նկարագրությունները: Անգլախոս վաճառականի և կամ գործարար մարդու դիտարկումների շարադրանքը իր և այլոց գործի մասին, այլ կերպ ասած՝ տպագիր գրական լեզուն, լավագույնս կարող են ծա-

ուայել որպես գործարար դարձվածակազմության ուսումնասիրության նյութ: Անգլալեզու արձակի խոսքային նյութը իր բեմատիկ բազմազանությամբ հանդերձ առանձնանում է ընթերցողի համար աննկատ մի յուրահատկությամբ: Այն պարունակում է ժամանակի մեջ գործուն և գործարար կենսաձև ենթադրող խոսքային իրավիճակներ, որոնց ներսում առկա են ոչ միայն բովանդակային տեղեկություններ ժամանակի գործարարության ավանդույթի մասին, այլև նոր գործարար հասկացությունների գոյաձևումը տվյալ ավանդույթի լեզվական տիրույթում: Ժամանակակից անգլիացի արձակագիր Դեյվիդ Լոզը, որը նորօրյա Բրիտանիայի ամենալճարեցվող հեղինակներից մեկն է, կարող է իրավամբ համարվել այսպես կոչվող «արդյունաբերական վեպի» (the industrial novel) ժանրի հետևորդ: Վեպի ընթերցումը զուգորդվում է հերոսների՝ գործարար մարդկանց լեզվական վարքագծի դրսերումների ուսումնասիրությամբ: Լեզուն ժամանակակից Բրիտանիայի անգլերենն է, հերոսները՝ միշտին դասի բրիտանացիներ, այն է՝ **սոցիալական** մի շերտ, որը մշտնչենական կրողն է կենսապահովման պատասխանատվության, և որի խոսքը պարունակում է դատողությունների և ըմբռնումների մի շղթա, ինչն էլ ներպարփակ իմաստային ամբողջության մեջ գոյաձևում է գործի լեզուն (the language of business): Գործարար անգլերենը լեզվի կայացած ավանդույթների փոխակերպման և գոյաձևումների երկարության մասնապարհ է անցել՝ անկաշկանդ ու բնականոն կերպով ներառելով անգլերենի ընդհանուր բառապաշարի գույքը բոլոր ենթաշերտերը՝ այդպիսով ձևավորվելով որպես մի տերմինահամակարգ, որն իր բազմաբնույթ դրսերումներով առանձնանում է այլ ենթալեզուներից: Գործարար հաղորդակցությունը ի բնե ձգտելով ակտիվ խոսքային արտահայտության ինքնաբերաբար շտկում է լեզվական արտահայտչամիջոցները՝ իր ներսում գոյացնելով կոնցեպտուալ հասկացությունների նորագույն խոսքային մոդելներ, որոնք ստեղծվող տերմինի համար կառուցվածքային հենք են հանդիսանում:

Գործարար համատեքստում կիրառվող բառի տերմինացումը զուտ լեզվական խնդիր չէ և էապես պայմանավորված է արտալեզվական նշանների գործառությամբ: Տերմինագոյացումը գործարար անգլերենում տեղ է գտնում բացառապես գործարար դիսկուրսի ներսում: Ըստ պրոֆեսոր Գյունիթեր Քրեսի, գոյություն ունեն որոշ գերբնդիանրական նշանային (semiotic) սկզբունքներ, որոնք բնորոշ

Են մարդկային հաղորդակցության առհասարակ, և որոնք ակնհայտորեն նկատվում են բոլոր հասարակություններում և մշակույթներում: Դրանցից ամենակարևորվողը այն է, որ մարդիկ (հաղորդակցական ակտի մասնակիցները) նշաններ են կերտում, հաղորդում կամ փոխանակում՝ այդպիսով ձևին և նշանակությանը մղելով «միտումնավոր կապի» (a motivated relation): Այդ նշանների արտահայտման միջոցները և կերպերը (modes) կարող են տարրեր լինել: Կերպերը նշանային արտահայտչամիջոցներն են հասարակության մեջ ձևավորված անհատի, որն այդ կերպերին հաղորդում է իրական նշանակություններ՝ գործի դնելով ավանդույթի ներսում մատչելի նշանային պաշարները (semiotic resources): Քրեսը հակված է այն դրույթին, որ ընդհանուր սոցիալական, նշանային, հաղորդակցական սկզբունքները և դրանց կիրառությունները ընդամենը ներառում են լեզվական կիրառությունը որպես մի մաս հաղորդակցական գործընթացի, այդպիսով եզրակացնելով, որ նշանային կերպերը խոսքային արտահայտություն են գոնում համայնքների ներսում սոցիալական փոխչփումների (social /inter/ action) անվերջանալի գործընթացում (Cress, 2010): Քրեսի «քազմավերաբերականության» սկզբունքը (the multimodality approach) վստահաբար կարող է դիտարկվել որպես ելակետային և համընդգրկուն հենք գործարար տերմինի կայացման միտումները բնորոշելու համար: Այսու փորձենք հասկանալ, թե վեպում շրջանառվող գործարարության լեզուն ինչպիսի փոխակերպումներ կարող է դրսնորել և թե որքանով բարի հարանշանակությունների շղթան կարող է ընդլայնվել՝ այդ միջոցին ձեռք բերելով նեղ ոլորտային իմաստ ու կայանալ որպես տերմին:

Սառը բերվում է մի հասկած վեպից.

“ There are two sides to our operation, the foundry and *the machine shop*. We also do a bit of assembly work – small engines and steering assemblies, I am trying to **build it up** – but basically we are a general engineering firm, supplying components to the motor industry mostly. Parts **are cast** in the foundry or **bought in** and then we **machine**’ em. The foundry was allowed **to go to pot** in the seventies and Pringle’s started purchasing from **outside suppliers**. I am trying to make our foundry more efficient. So the foundry is a **cost-centred** operation, and the engineering side is **profit-centred**. But if all goes well, in time we should be able **to sell our castings** outside and make profit on them too. Robin soon

gave up trying to follow his explanations. She could hardly hear them because of the din, and the few words and phrases that she did catch – “*tolerances to five thou*”, “*cross-boring*”, “*CNC machine*”, “*indexes round*”, - meant nothing to her.”Now we can have a look at the KW,”he said marching off again. “Better hurry, or they’ll soon be *knocking off for lunch.*” “I thought the man in the office said it was a new machine, it doesn’t look new.”

“It’s not new,” said Wilcox. “I can’t afford to buy machines like that brand new. I got it second-hand from a foundry in Sunderland that closed down last year. A *snip*, it was.” (Lodge, 1989)

Վեպի հերոսների զրոյցներում առկա են թե՝ կայացած գործարք տերմիններ և թե՝ գործարք նորաբանություններ (business neologisms): Գործարք խորոշությունը ներսում առկա բառապաշտի տերմինագոյացման միտումը սկզբնապես ի հայտ է գալիս խորային իրականության մեջ : Մեկնաբանության համար կիրառելի մեթոդ, անշուշտ, լեզվական միավորների գործառական իմաստային շերտի բազմավերաբերական ուսումնասիրությունն է սոցիալական դիսկուրսի մակարդակում: Այսպես, վերը բերված հատվածում ընդգծված բառակապակցությունները պարունակում են լեզվական միավորներ, որոնց կոնցեպտուալ նշանակությունները առերևույթ հասկանալի կարող են թվայի չեզոք ընթերցողին,սակայն ակնհայտ են, որ դիսկուրսի ներսում տեղ է գտնում բարիմաստի նեղացում, ինչը պայմանակերպում է չեզոք լեզվական միավորի հավանական տերմինացումը: Այսպես, օրինակ, **cost-centred** / ծախսատար/ և **profit-centred** /շահույթ հետապնդող/ բառակապակցությունները կարող են համարվել ոլորտին բնորոշ բառեր (domain-specific words), քանի ժամանակակից գործարք անգլերենին բնորոշ է ածական դերքայի կիրառությունը որպես վերջածանց: Այնուամենայնիվ, որքան էլ որ ակնհայտ է բառակապակցությունների տերմին լինելը, տվյալ լեզվական միավորները հաստատագրված չեն որպես կայուն բառարանային տերմիններ: Մինչդեռ **machine shop** /մետաղի արտադրամաս/ բառակապակցությունը հաստատագրված տերմին է: **Outside suppliers** բառակապակցության ներսում առկա լեզվական միավորներից մեկը *suppliers* գոյականը ոլորտային է, մյուսը՝ outside ածականի գործառություն կրող մակրայր ցուցանում է չեզոք բարիմաստ, ինչը դարձնում է բառակապակցությունը առերևույթ ըմբռնելի,

սակայն ակնհայտ է, որ խոսողը նկատի ունի որոշակի կոնկրետ պարտավորություններ և կարգավիճակ կրող մատակարարի, որն ակներևարար ներիմաստ տերմին է և այնուամենայնիվ որպես տերմին-բառակապակցություն դեռևս հաստատագրված չէ տերմինաբանական բառարաններում: Այնինչ **cross-boring** /ոչ-շահավետ բոլոր կողմերի համար/ բառի դեպքում մենք բախվում ենք մի գործարար նորաբանության, որի կազմության մեջ **cross** - մասնիկը նախածանցի դերակատարություն ունի, իսկ բառարմատը ամենին տերմինի տպագորություն չի բողոքում: Ուշագրավ է **indexes round** բառակապակցության կերպարանը կրող արտահայտությունը, որը դիսկուրսի մակարդակում սեղմված նախադասություն է, այն է՝ *Cheat on going around* հերթի հերթի է զայխ (թարգմ.): Խոսակցական իդիոմները և բայական դարձվածքները գործարար դիսկուրսում առավելապես միտված են տերմինացման: Այսպես, օրինակ՝ **build smth up** (թարգմ. ստեղծել, ձևավորել նորը, մի բան անել), **buy in** (թարգմ. պայմանագրով ձեռք բերել պահեստամասեր այլ արտադրողից) և **to go to pot** (թարգմ. հերևն անհծովել) խոսակցական դարձվածքները արդեն իսկ հաստատագրված են որպես գործարար բառարանային տերմիններ: **Knocking off for lunch** սկզբային դարձվածքը հաճախ է նկատվում վեպի գլխավոր հերոսի խոսքում, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ միջին դասի բրիտանացի կառավարչի բառապաշտին բնորոշ աշխատավորական սկզբունք հանդիսանում է հենքային բառաֆոնի գործարար տերմինի կայացման համար:

Տերսուում նոր իմաստ է ձեռք բերում **casting** բառը **sell our castings** արտահայտության մեջ: Այս դարձվածքի նշանակությունը և նրա հավանական տերմինացումը գոյանում է զուտ դիսկուրսի ներսում: Համատերսուում **casting** բառը թարգմանարար նշանակում է **վերամշակված խոտամ՝ արտադրամքի տեսքով**, որը կարելի վաճառքի հանել: **Casting** բառի այս նեղ ոլորտային նշանակությանը դեռևս չենք հանդիպում բառարաններում: Անդրադառնանը **snip** բառին, որն անշուշտ սկզբային լեզվական միավոր է (թարգմանարար կնշանակի **գտած ասպրամք**), ոչ այնքան ողջունելի բայց և օրգանական իր առօրեական գործածության մեջ: Գործարար տերմինների բառարաններում այն ներկայանում է որպես լմորունելի և գործածական տերմին: **Stress** ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ գործարար տերմինի կայացման սկզբունքները, ներքին

լեզվաշինական և գործառական միտումները որքան հակասական են, նույնքան օրինաչափ:Որքան էլ մեկուսի և ներկապակցված դիտարկվի բառի կոնցեպտուալ նշանակությունը, բազմավերաբերական դիսկուրսում այն ձեռք է բերում անապասելի նոր իմաստային գունավորում, ինչը դարձնում է բառը ոլորտի համար հատկանշական, այն է՝ բառի առօրեական իմաստը փոխակերպվում է որոշակի կոնկրետ գործարար համայնքի ներսում նոյն համայնքի համար հատկանշական գործառական իմաստի, այլ կերպ ասած՝ բառը փոխակերպվում է տերմինի:

Այսպիսով, գործարար աճագլերենը առավելապես բնորոշվում է դարձվածակազմական հնարքներով և կենսառատ խոսքի անկաշկանդ գարգացումներով: Այն է, ոլորտին բնորոշ ենթալեզուն գոյանում է բառակապակցությունների դրսևորումներով, համալրվում է նորարանություններով, ինչը տերմինաստեղծման միտումներ է պարունակում: Այդպիսով, կայանում է մի յուրօրինակ տերմինահամակարգ, որի ներսում գործում են թե խոսակցական դարձվածքները և թե արդեն ընդունելի դարձած և հաստատագրված ոլորտային լեզվական միավորները նոր դարձվածքների տեսքով՝ արտահայտելով մեկ որոշակի կոնկրետ հասկացության իմաստ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Jakobson R. Linguistics and Poetics // Style and Language, ed. by Th. A. Sebeol. Cambridge: Massachusetts Institute of Technology, 1960.
2. Kress G. Multimodality: a social semiotic approach to contemporary communication. London: Routledge Taylor & Francis Group, 2010.
3. Teubert W, Cermakova A. Corpus Linguistics. London: Continuum, 2008.
4. Cambridge Business English Dictionary. Cambridge: Cambridge University Press, 2011.
5. Oxford Business English Dictionary. Oxford: Oxford University Press, 2005.
6. Longman Business English Dictionary. Pearson Education, 2003.
7. Manser M., BetsisA. English Idioms Dictionary (including idioms in Business English context). Global ELT, 2012. www.globalelt.co.uk
8. Lodge D. Nice Work. USA: Penguin Books, 1989.

9. Աղայան Էդ. Տերմինագիտություն, Երևան, 1978:
10. Бенвенист Э. Общая лингвистика. Москва, 1974.
11. Реформатский А.А. Что такое термин и терминология. Москва, 1959.

A. Оганесян – *O некоторых модификациях деловой речи (на материале романа Дэвида Лоджа «Хорошая работа»)*. – В статье рассматривается социолингвистический аспект становления деловых терминов на основе диалогов деловых людей в современной Англии в романе британского писателя Дэвида Лоджа «Хорошая работа». Настоящая статья посвящена изучению лексических единиц внутри делового дискурса на основе теории мультимодальности Гюнтера Кресса.

A. Hovhannessian – *On Some Modifications of the Language of Business Communication in David Lodge's "Nice Work"*. – A great deal of academic research has been done in the field of terminology management within the framework of linguistic studies. This paper is another attempt to search for the ways of the development of words with conceptual meaning into domain-specific words, i.e. terms in the context of business communication. The material for the study is David Lodge's bestseller "Nice Work". The focus of the paper is to illustrate the paradoxical situation whereby general vocabulary items as well as well-established domain-specific items can smoothly develop into newly-coined business terms in an absolutely different business context in which members of a business community practically use socio-linguistically variant language. G.Kress's theory of "social semiotic approach to contemporary communication" has served as a fundamental method of analysis.